



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

« 15 » օգոստոսի 2017 թվականի N: 260-Վ ք.Գյումրի

ՄԵՍՐՈՊ ԱՐՇԱՎԻՐԻ ԲՂՆՈՒՆՈՒ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2.2-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի N 436-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետի և 5-րդ կետի «ա» ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2017 թվականի հուլիսի 27-ի N:01/13/1/1857-17 գրությունը և Մեսրոպ Բզնունու 2017 թվականի օգոստոսի 14-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը (ծածկագիր՝ 67-2.1-5) զբաղեցնելու համար Մեսրոպ Արշավիրի Բզնունու հետ 2017 թվականի օգոստոսի 15-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:
2. Աշխատանքային պայմանագրի ժամկետը՝ 2017 թվականի օգոստոսի 15-ից մինչև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի նշանակումը:



Իսկականի հետք ճիշտ է՝

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ